

վկայս Մաթոսին արհամարհելով եւ ի բաց վարելով բազում անգամ: Եւ սիրելի վէզիրին, որ մէքթուպ-ճին էր զառաջինն եւ այժմ ուշիւս քիթապ, եւ թէս-քէրէճիքն ի կողմ Ալի փաշային էր եւ զազասքէրն եւս ի բերան վէզիրին հայէր, մինչեւ երբեմն ի վկայել Հուսամ աղայի ումեմն, յառաջագոյն որ տեսեալ էր զգիր Իսհակին զազէսքէրն, թաղեալ զգրիչն ի մեւրանն գրել կամէր զվկայութիւն նորա, եւ ի հայիւն յերես վէզիրին՝ յօնօքն եւ ակնարկեալ թէ Մի՛ գրեր, եւ ելանէին արտաքս: Անկանէր Ալի փաշայն բազում անգամ յոտս վէզիրին՝ գոչելով. Հա՛տ զգլուխ իմ կամ գհախն իմ հախ արա՛, նոյնպէս եւ առ զազասքէրն գեգերէր: Եւ ոչինչ օգնէր Մաթոսին յայնժամ եւ ոչ վէզիր քէհասին եւս, մինչեւ ի տասն եւ եօթն քսակն ետ Մաթոսն միջնորդօք, եւ փաշայն քսան եւ հինգ էջ սուլի լինելոյ սակի. երկու երեք անգամ սուլի լինիլ կամեցան, մինչեւ զարձեալ ի բողոքելոյ Մաթոսին երկրորդում՝ թուղթ եկն ի Չաթալճոյ յիսհակէ թէ Զիմէթընի իպրա էլլետուքտէ Ապրօ կեալուր, պէն յտախի շահտըմ. վէ Ապրօ պիր ասըլաճաղիտի ~~եւ~~ օղլի պիր մէլլուն տըր, վէ լաքին տինըմըզ վար, վէ շահատէթէ մուղթաճ օլունուրսէ՝ պէն տախի շահտըրկ իտէրըմ: Երբ շրջեցուցին զայս գիրընդ զազասքէրն եւ ընդ թէզքէրէճիսն եւ ընդ ուշիսն՝ զիջան ամենեքեան նոքօք, եւ յիշին զերկու թուղթ Իսհակին առ վէզիր, պատասխանէ թէ Օլ օնուն գարտաչի իտի. եւ ի գնալն վէզիրին առ թագաւորն, եւ խիւայեցաւ ի նոյն Ուրբաթի, որ չեղեւ տիվան: Իսհակն թալիսիսճուն յիշատակէ զբանն, որ նահասոյց վէզիրին, եւ յաւուր յիշատակի նինուէացուցն ապաշխարութեան ելին ի տիվան եւ գրեցաւ անդ երկու վկայք: Ասէ վէզիրն. Էֆէնտի՛, թագայուտ էլլէ պունլարի թէսքիէտէ. զազասքէրն պատասխանէ թէ